



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15 հունվարի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 56 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալը, աշխատակազմի իրավաբանական, կազմակերպական, եկամուտների հաշվառման և գանձման, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ի ներկայացուցիչներ:

Նախքան օրակարգային հարցերին անդրադառնալը՝ Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց.

ԻՄ ՔԱՅԼԸ կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամներ՝ Լուսինե Բադալյանը, Նարինե Խաչատրյանը, Արթուր Դավթյանը, Նարեկ Զեյնալյանը, Գայանե Աբրահամյանը, Ալեքսանդր Ավետիսյանը, Սոնա Ղազարյանը, Արուսյակ Ջուլիակյանը, Բարգավաճ Հայաստան կուսակցության Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ՝ Արման Աբովյանը, Լույս կուսակցությունների դաշինքի Երևան քաղաքի ընտրական ցուցակով ընտրված Երևան քաղաքի ավագանու անդամ՝ Անի Սամսոնյանը դիմումներ են ներկայացրել ավագանու անդամի պաշտոնից հրաժարվելու մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 14.01.2019թ. արձանագրությունների համաձայն՝ Երևանի ավագանու Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են Իմ քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուներ՝ Ռաֆայել Ավետիսյանին, Սաշա Կատվալյանին, Աննա Ջավախյանին, Աշոտ Սարգսյանին, Արթուր Մայիլյանին, Վազգեն Դարբինյանին, Արուսյակ Հարությունյանին, Հայկ Միրզոյանին: Երևանի ավագանու Լույս կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է ԼՈՒՅՍ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Թեհմինա

Վարդանյանին: Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու՝ Լյուդմիլա Սարգսյանին:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար է նշանակվել Սիբայել Մանրիկյանը:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու **2019** թվականի հունվարի **15**-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի **30**-րդ հոդվածը.

**1) 2019** թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

**1. ԼՍԵՅԻՆ** - **2019** թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Արմեն Հարությունյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՄԱՐ**- Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

**1.** Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետ Ա. Հարությունյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «**2019** թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովի նախագահին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** – Ելույթների համար գրանցվել են ավագանու **4** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

**1.** Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

**2.** Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

**3.** Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**4.** Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

«**2019** թվականի տեղական տուրքերի գծով արտոնություններ սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – **1.** Սահմանել, որ Երևանի վարչական տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց **2018** թվականի հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել **115** միլիոն դրամը, **2019** թվականի համար սահմանված տեղական տուրքի դրույքաչափերի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

1) Երևանի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար **2019** թվականի տեղական տուրքի դրույքաչափի **58.34** տոկոսի չափով:

2) Երևանի վարչական տարածքում առևտրի օբյեկտներին ժամը **24<sup>00</sup>**-ից հետո աշխատելու թույլտվության համար **2019** թվականի տեղական տուրքի դրույքաչափի **72.92** տոկոսի չափով:

3) Երևանի վարչական տարածքում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը **24<sup>00</sup>**-ից հետո աշխատելու թույլտվության համար **2019** թվականի տեղական տուրքի դրույքաչափի **70** տոկոսի չափով:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետին ուղղված անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի դիմումը՝ տեղական տուրքի արտոնություն ստանալու մասին, որին կցվում են. անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական ռեգիստրի վկայականների պատճենները, շենքի կամ շինության սեփականության կամ օգտագործման վկայականի պատճենը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկանքը:

3. Սույն որոշման **1**-ին կետում նախատեսված արտոնությունները կիրառվում են նաև այն տնտեսավարողների համար, ովքեր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառվել կամ գրանցվել են **2019** թվականի հունվարի **1**-ից:

Սույն կետով նախատեսված արտոնությունների կիրառման համար տնտեսավարող սուբյեկտները ներկայացնում են սույն որոշման **2**-րդ կետում նշված փաստաթղթերը, բացառությամբ՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված իրացման շրջանառության վերաբերյալ տեղեկանքի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է **2019** թվականի հունվարի **1**-ից ծագած հարաբերությունների նկատմամբ

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **56** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **56**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

Որոշումն ընդունվել է միաձայն

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝  
Ն. Ղուկասյան